ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՏՈՀՄԱԾԱՌԻ ՄԻ ՃՅՈՒՂԸ. ՀԱՅԿԱՆՈՒՇ (ՀԱՅԿՈ) ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԱՄՅԱՆ Ա. Գ.

Վահան Տերյանի՝ XX դ. սկզբի նամակագրության մեջ հաճախ է հիշատակվում նրա զարմուհու, հորաքրոջ՝ Եղիսաբեթի և Մկրտիչ Նալբանդյանի դստեր՝ Հայկանուշ-Հայկոյի անունը: Նրանց ընտանիքում չորս երեխա կային, դուստրերը՝ Սաթենիկը և Հայկանուշը, և որդիները՝ Ստեփանը և Արշակը: Հայկանուշը կրտսերն էր, ծնվել է Գանձայում 1882 թ.: Երբ ընտանիքը Թիֆլիս տեղափոխվեց, աղջիկն ընդունվեց Հովնանյան եկեղեցական-ծխական ուսումնարան, որն ավարտելուց հետո ընդունվեց Թիֆլիսի I իգական գիմնազիայի երկրորդ դասարան, որն էլ ավարտելով՝ անցավ VIII մանկավարժական դասարանի լրացուցիչ դասընթացը. դա նրան իրավունք տվեց աշխատելու որպես տնային ուսուցչուհի, ինչպես նաև առանց քննությունների ընդունվել Մոսկվայի իգական բարձրագույն դասընթացներ:

1897-1899 թթ. Վահան Տերյանն ապրում էր Թիֆլիսում, ավագ եղբոր՝ Արամի հետ և պատրաստվում էր ընդունվելու Լազարյան ճեմարան: Այդ շրջանում ազգականների՝ հորաքույր Եղիսաբեթի և նրա զավակների հետ հանդիպելու հնարավորություններ կային: Հայկանուշը սովորում էր գիմնազիայում, ինչպես նաև Սոֆյա Օտարյանը, որը Վահանի հետ ռուսերեն էր պարապում. հնարավոր է, որը աղջիկները վաղուց էին ծանոթացել, գուցե և նրանց ծանոթացրել էր Տերյանը… Երբ Հայկանուշն ընդունվեց Մոսկվայի իգական բարձրագույն դասընթացներ, նրան նյութական օգնություն ցուցաբերեց հայտնի բարեգործ Մարիամ Թումանյանը, որի արխիվում պահպանվել է Հ.Նալբանդյանի նամակը, որտեղ վերջինս պատմում է իր պարապմունքների մասին և շնորհակալություն հայտնում իրեն ուղարկված 25 ռուբլու համար. «Չգիտեմ ինչպես, ինչ խոսքերով հայտնեմ իմ անկեղծ, անչափ շնորհակալությունը, միայն այսքանը կարող եմ ասել, որ հավիտյան չեմ մոռանա Ձեր արած բարիքը…»[1]:

«Հանուն հանապազօրյա հացի»՝ *աշխատանքի իր փնտրտուքների մասին կեսկատակ տրտնջում էր «հավիտյան մրսած, հավիտյան սոված, անտուն, անօթևան թափառական»[2] ուսանող Տերյանը: Սակայն, չնայած մշտական կարիքի մեջ լինելուն, կենցաղային բազմաթիվ անհարմարություններին, նրանք երիտասարդ էին, ծրագրերով լի…*

---

[1] *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մ. Թումանյանի ֆոնդ, պիպ. միավոր 621:*

[2] **Վահան Տերյան,** *Երկերի ժողովածու, հ. III, Ե., 1963, էջ 151:*

Վահանը, հավանաբար, հրապուրված էր Սոֆյա Օտարյանով, ինչպես ինքն է խոստովանել. «Սոնա, գիտեցեք, որ Դուք այն հազվագյուտ կինն եք, որին ես արժանի եմ համարում իմ բարեկամությանը… ես նորից ուզում եմ վկայել Ձեզ իմ խորին հարգանքը և համակրությունը… Խնդրում եմ բարեհաճ լինել և սիրել բանաստեղծ-ուսանողին»[3]: Գրեթե յուրաքանչյուր նամակում նա հիշատակում է Հայկանուշին, որը նույնպես նամակագրություն ուներ Սոֆյայի հետ: Աղջիկները Վահանի միջոցով միմյանց ողջույններ էին հաղորդում, նորություններ հայտնում, նա էլ երբեմն իր նամակների հետ միասին Հայկոյի նամակներն էր ուղարկում Սոֆյային, երբեմն էլ գանգատվում էր, որ Հայկանուշը տանը չէ, «էլի տեսնես ու՛ր է չքվել», այդ ամենը վկայում էր նրանց միջև եղած բարի, մտերիմ հարաբերությունների մասին: Տարված սոցիալիստական գաղափարներով՝ Տերյանը խոստովանել է, որ իրեն շրջապատողների նկատմամբ իր վերաբերմունքի մեջ գլխավորը, որոշիչը ոչ թե արյունակցական կապն է, այլ՝ «հոգևոր, բարոյական եղբայրությունը», «ոչ թե հայր, եղբայր, մայր, քույր, այլ՝ ընկեր – ահա թե ինչ է հարկավոր մարդուս»[4]: Հավանաբար, բանաստեղծը հենց այդպես էր ընդունում Հայկանուշին՝ նրան ընկեր համարելով…

Լսելով Հայկոյի հոր մահվան մասին՝ նա գրում է Օտարյանին. «Հայկանուշին ավելորդ համարեցի իմ ցավակցությունը հայտնել, որովհետև ես ինքս նշանակություն չեմ տալիս այդպիսի դեպքերում ուրիշի մխիթարանքին և ինքս էլ այժմ համոզված եմ, որ ես իզուր տեղը նրան կանհանգստացնեմ»[5], այսինքն՝ պոետը նրա մեջ տեսնում էր հարազատ հոգու, հոգեպես մերձավոր մարդու:

Շուտով Մոսկվայում Հայկանուշին միացան Սոֆյա Օտարյանը, որը վերադարձավ Գերմանիայից, և Վարվառա Հարությունյանը. հետագայում նա դարձավ Տերյանի մտերիմ ընկերոջ՝ Յոլակ Խանզադյանի կինը: Աղջիկներին ողջ կյանքում միավորում էր ամուր ընկերությունը, ինչին նպաստում էր նաև ուսումը Մոսկվայի իգական բարձրագույն դասընթացներում:

Նրանք հայուհիների նոր սերնդի կրթված, մտավորական ներկայացուցիչներն էին, որոնց համար Մոսկվան դարձել էր կյանքի յուրատեսակ համալսարան: Շատ ընդհանուր բաներ ունեին Տերյանի հետ. նրանց միավորում էին ծագումը, կրթությունը, սոցիալական դրությունը և հետաքրքրությունները: Լազարյան ճեմարանի ընկերների՝ Յ. Խանզադյանի, Պ. Մակինցյանի, Ալ. Մյասնիկյանի, Հ. Օհանջանյանի հետ նրանք կազմում էին Տերյանի մերձավոր շրջանը, հոգեպես մտերիմ մարդկանց միությունը, որոնց միավորել էր հայացքների և անձնական համակրանքի ընդհանրությունը: Չնայած կյանքի ծանր պայմաններին, նրանց հաջողվում էր չվհատվել. երբեմն այցելում էին ուսանողական թեյարաններ ու գինետներ,

[3] Նույն տեղում, էջ 150:
[4] Նույն տեղում, էջ 170:
[5] Նույն տեղում, էջ 517:

որտեղ մի բաժակ թեյ կամ գինի խմելով կարելի էր բանավիճել և հաճելի ժամանակ անցկացնել: Այդ ամենի մասին որպես հուշ է մնացել Ց. Խանզադյանի լուսանկարը՝ «Հայկոյին՝ միմյանց հետ «սրբազան պանդոկում» անցկացրած օրերի բարի հիշողություն» մակագրությամբ:

Հայկանուշ և Սաթենիկ Նալբանդյան քույրեր, Լևոն Արամյան

Կյանքը Մոսկվայում, նոր միջավայրում, ծանոթությունը պատմական և մշակութային արժեքների հետ, այցելությունները թատրոններ, ցուցահանդեսներ ու թանգարաններ, համաշխարհային գրականության

գլուխգործոցներին հաղորդակից լինելը և հենց «արծաթե դարի» աուրան նպաստեցին Վ. Տերյանի հոգևոր վերափոխմանը՝ որպես նոր դարաշրջանի հայ բանաստեղծի կայացմանը: Ինչպես նկատել է Պ. Մակինցյանը, բանաստեղծը «ըմբռնում էր, որ եթե ինքը դառել է Տերյան – դա մեծ քաղաքում, կուլտուրա կան միջավայրում ապրելու արդյունք է»[6]:

1908 թ. գարնանը, երբ իր առաջին ժողովածուի՝ «Մթնշաղի անուրջների» հրատարակության կապակցությամբ Վ. Տերյանը եկավ Թիֆլիս, նա ծանոթացավ Հովհաննես Թումանյանի հետ, իսկ մայիսի 16-ին իր զարմուհի Սաթենիկի՝ գրող Մադաթ Պետրոսյանի կնոջ ուղեկցությամբ այցելեց պոետին, որը շատ բարյացակամորեն արտահայտվեց նրա բանաստեղծությունների մասին՝ ասելով. «Դուք բանաստեղծ էք: Դա ամենագլխավորն է: Դուք խոսքերի հետ չեք խաղում…Ես ուրախությամբ ողջունում եմ Ձեր մուտքը գրական ասպարեզ - բարով եկաք»[7]:

Չնայած ժողովածուի հրատարակությանն ուղեկցող ամենաբազմազան խոչընդոտներին (փողի պակասը, թղթի, կազմի որակի հետ կապված խնդիրները և այլն), որոնց մասին Տերյանը մշտապես խորհրդակցում էր Ց. Խանզադյանի հետ, նա երբեք չմոռացավ Մոսկվայի իր ընկերներին և ջերմ ողջույններ էր ուղարկում «Հայկո-Սոնյա-Վարյա կոմպանիային»՝ խոսքը համեմելով տերյանական ինքնատիպ, նուրբ հումորով: Այսպես, նամակներից մեկում, եթե հարազատորեն խնդրում էր հաղորդել Հայկոյին, որ «բոլորն առողջ են», նկատի ունենալով նրա մորը՝ Եղիսաբեթին, քրոջը՝ Սաթենիկին և ամբողջ ընտանիքը, ապա այնուհետև կատակով խնդրում էր Յոլակին. «Ի հիշատակ անցյալ օրերի պինդ, ցավացնելու չափ պինդ սեղմիր Վարյայի ձեռքը, ինչպես մի ժամանակ ես էի սեղմում: Սոնային պատվի առ և մատուցիր զինվորական բոլոր պատշաճ պատիվները և ողջունիր քո արքայի անունից»[8]:

1914 թ. Հայկանուշը վերադարձավ Թիֆլիս, ամուսնացավ: 1920-ական թթ. սկզբին նա իր փոքրիկ որդու և մոր հետ ուղևորվեց Պարսկաստան՝ որոնելու ամուսնուն՝ Լևոն Արամյանին, որը համաշխարհային պատերազմի մասնակից էր, պարգևատրվել էր երկու Գեորգիևյան խաչերով: Կապը նրա հետ ընդհատվել էր Անդրկովկասի քաղաքական բարդ իրադարձությունների պատճառով: Հայկանուշը ամուսնուն չգտավ (ավելի ուշ, երբ իրադրությունը կայունացավ, վերջինս վերադարձավ), բայց սարսափելի ողբերգություն ապրեց. մայրը՝ Եղիսաբեթը, Պարսկաստանում մահացավ խոլերայից:

Ցավոք, Հայկանուշ Նալբանդյանը՝ Վահան Տերյանի կյանքի մի ամբողջ շրջանի վկան, հուշեր չի թողել բանաստեղծի մասին:

Տարիներ առաջ, երբ լույս տեսավ Վահան Տերյանի եռհատորյակը (1960-1963), Հայկանուշ Նալբանդյանի վերաբերյալ ծանոթագրություններում

---

[6] **Վահան Տերյան,** *Երկերի ժողովածու, հ. I, Կ. Պոլիս, 1924, էջ XXXV:*

[7] **Վահան Տերյան,** *Երկերի ժողովածու, հ. III, Ե., 1963, էջ 207:*

[8] *Նույն տեղում, էջ 200:*

ասվում է, որ չի հաջողվել նրա անձը ճշտել (հ. III, էջ 640), սակայն նույն հատորի անվանացանկում նշված է, որ Հ. Նալբանդյանը Վ. Տերյանի հորաքրոջ աղջիկն է և նկարիչ Դմիտրի Նալբանդյանի տատը (էջ 784), իսկ Սաթենիկ Նալբանդյանը Գանձա գյուղից է, Վ. Տերյանի ազգականուհին (էջ 786):

Պոետի քառհատորյակում (1972-1979) Հայկանուշ և Սաթենիկ քույրերի մասին տեղեկությունները ճշգրտվել են: Հայկանուշի մասին ասվում է, որ նա Դմ.Նալբանդյանի հորաքույրն է: Դա հավաստի է, քանի որ նկարիչը Հայկանուշի եղբոր՝ Արշակի որդին է: Բայց մեզ թվում է՝ Դմ. Նալբանդյանի հետ ազգակցական լինելու փաստը այնքան էլ էական չէ: Այդպես կարող ենք ասել, որ Բուլատ Օկուջավան նրա մյուս եղբոր՝ Ստեփանի թոռն է: Մեր կարծիքով, նման տեղեկությունը տվյալ ենթատեքստում նույնպես տեղին չէ:

Ըստ երևույթին, սարերի հետևում չէ Վահան Տերյանի ստեղծագործական ժառանգության հերթական հրատարակությունը, և, թյուրիմացություններից խուսափելու համար, կցանկանայինք սեփական լուման ներդնել Հայկանուշ Նալբանդյանին առնչվող հետագա մեկնաբանություններում՝ տալով նրա հակիրճ բնութագիրը: Հայկանուշ (Հայկո) Նալբանդյանը (1882-1947) Վահան Տերյանի հորաքրոջ դուստրն է, մանկավարժ, ավարտել է Մոսկվայի իգական բարձրագույն դասընթացների ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի բնական գիտությունների բաժինը: 1902-1914 թթ. ապրել է Մոսկվայում, եղել է բանաստեղծի մտերիմներից: